ՍԱՄՈՒՐԱՅՆԵՐԸ

Դասակարգերի բաժանումը շատ խիստ էր Ճապոնում: Զէնք կրելը միայն սամուրայներին էր թոյլ տրւում: Կրում էին երկու սուր, որ խրում էին գօտկի մէջ: Նրանք ընդհանրապէս մեծ արտօնութիւններ էին վայելում: Օրինակ՝ միեւնոյն յանցանքի համար տարբեր աստիճանի պատիժներ էին նշանակւած սամուրայի եւ ստորին դասից մէկի համար:

Ամենախիստ էտիկետ — ճեւականութիւն էր պահպանւում տարբեր դասակարգերի յարաբերութեանց ժամանակ: Քաղաքացիք սամուրային հանդիպելիս փռւում էին գետին երեսի վրա, նոյն կերպով էր բարեւում պաշտօնեան իր մեծաւորին, ինչպէս եւ դայմիօսը միկադոյին ներկայանալիս: